ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

Հոկտեմբերի 19-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոբելյանական տարվա հերթական կիրակի օրը, Ս. Էջմիածինը հյուրընկալել էր հայոց ազգային բանակի ուխտավոր բարձրաստիճան զինվորականների՝ առաջնորդությամբ ՀՀ պաշտպանության նախարար տիար Սերժ Սարգսյանի: Ուխտավորների մեջ էին ԼՂՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ պաշտպանության փոխնախարարները և բանակի բարձրաստիճան սպայական կազմը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց հայոց բանակի հոգևոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Արշեն աբդ. Սանոսյանը:

Ս. Պատարագի ընթացքում հանուն Վեհափառ Հայրապետի հայոց բանակի ուխտավորներին և հյուրերին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Ապա ուխտավորներին իր պատգամը հղեց պատարագիչ Հայր Սուրբը (տե՛ս էջ 57):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ արցախյան ազատամարտում զոհված հայ զորականների հոգու հանգստության համար:

Ս. Պատարագից հետո Վեհարանում ուխտավորներին ընդունեց Ամենայն Հայոց Հայրապետը: Հանդիսության ժամանակ ներկաներին ողջունեց Սերժ Սարգսյանը:

«Այնպես է ստացվել մեր պատմության ընթացքում, որ զինվորը, զորավարը հավատ է քարոզել, իսկ եկեղեցականը սուրը ձեռքին առաջնորդել է մեր ժողովրդին ազատագրական պատերազմի: Եվ ես շատ ուրախ եմ, որ այսօր մեր բանակի մեջ կա անսասան հավատ, մեր բանակի մեջ կա մեծագույն հարգանք Հայոց Եկեղեցու, նրա Հայրապետի նկատմամբ: Ուրախ եմ նաև այսօր մեկ անգամ ևս հավաստիացնելու, որ հայկական բանակն այսօր քան երբեք ամուր է, այսօր քան երբեք ի վիճակի է պաշտպանելու մեր Հայրենիքի սահմանները, ինչու չէ՝ նաև կյանքով կանգնելու հանուն մեր հավատի»,- իր խոսքում նշեց նախարարը:

Այնուհետև հայոց բանակի բարձրաստիճան սպայական կազմին իր օրհնության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը:

«Հայոց բանակի ուխտի այս օրը աղոթք և մեկ պատգամ ունենք, որպեսզի չտկարանա՛ք ձեր նվիրումի և ձեր սիրո մեջ՝ առ Հայրենին և առ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպեսզի արիությամբ շարունակե՛ք ձեր ընթացքը հայրենակերտումի, իրականությո՛ւն դարձնեք երազները մեր ժողովրդի զավակաց, իրականությո՛ւն դարձնեք Հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած և այժմ Եռաբլուրում հանգչող ձեր մարտակից ընկերների: Պարտք ունեք ձեր ուսերին և փառք ունեք ձեր ուսերին՝ ծառայությամբ ապահովելու խաղաղությունը ինչպես Հայոց երկրի, այնպես էլ Հայոց հողում հանգչող ձեր հերոս մարտակից եղբայրների»,- ասաց Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ
ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԻՐ ԽՈՍՔՆ Է ՈՒՂՂՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ի գնահատություն իրենց ծառայության՝ Գարեգին Բ Հայրապետը պաշտպանության նախարարի առաջադրությամբ և հայոց բանակի հոգևոր առաջնորդի միջնորդությամբ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշան հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներ գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին, գեներալ-լեյտենանտ Ցուրի Խաչատուրովին, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանին:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկավ ՀՀ պաշտպանության նախարարության Սպայի տան «Զորական» համույթը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ